

## **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎՆԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

### **ՀԵՂԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱԼ**

Չոլովն այն քերականական կարգերից է, որ հայ և օտարազգի լեզվաբաններ կողմից արժանացել է իրարամերժ գնահատականների:

Ուսումնասիրելով հարցին նվիրված լեզվաբանական գրականության ամենահայտնի էջերը՝ կարծում ենք՝ ճիշտ կլինի հոլովը սահմանել այսպես. *հոլովը անվանը (կամ անվանողաբար կիրառված այլ բառերին) հատուկ բառաթեքման քերականական կարգ է, որով արտահայտվում են շարահյուսական հարաբերություններ, և որն ունենում է առանձին ձև՝ բացառապես համադրական տիպի:*

Օբյեկտիվ-լեզվական և սուբյեկտիվ-լեզվաբանական պատճառներով աշխարհի լեզուներում հաշվվում է հոլովների տարբեր քանակ՝ սկսած 2-ից (հին ֆրանսերեն, ժամանակակից անգլերեն, հինդի) մինչև 46 (թաբասարան): Չ. Աճառյանը աշխարհի լեզուներում ճանաչված հոլովների թվի ընդհանուր գումարը հասցնում է 70-ի [1, 327-335]:

Ելնելով տարբեր սկզբունքներից՝ ժամանակակից հայերենում առանձնացվում է 5-7 հոլով: Նպատակ չունենալով այս ուսումնասիրության շրջանակներում քննարկել այդ տեսությունների դրական և բացասական կողմերը՝ այստեղ մենք կփորձենք ամբողջացնել ժամանակակից հայերենի հոլովական համակարգի ձևաիմաստային նկարագիրը՝ ելնելով 5 հոլովի տեսության դիրքերից:

**Չոլովի ձևը:** Այստեղ մենք անմիջապես բախվում ենք հոլովական համակարգին վերաբերող մեկ այլ հասկացության՝ *հոլովման* հետ, որը կարելի է սահմանել այսպես. *հոլովումը բառի հոլովվելու կերպն է, նրա ձևավորման առանձնահատկությունը:*

Մասնագիտական գրականության մեջ հոլովումներից յուրաքանչյուրը կոչվում է «հոլովման տիպ»: Այստեղ մենք կփորձենք առաջարկել եզրույթների կիրառման որոշակի փոփոխություն: Այսպես՝ համաձայն չենք հոլովումները «հոլովման տիպ» անվանելու հետ. կարծում ենք «տիպ» բառը պետք է կիրառել միայն տիպաբանության մեջ ընդունված իմաստով՝ համադրականության, վերլուծականության, կցականության, թեքականության, անջատականության և բազմահամադրականության: Եթե խոսում ենք հայերենի հոլովման տիպերի մասին, ապա պետք է դրանով հասկանանք կցականությունն ու թեքականությունը: Իսկ հոլովումներից յուրաքանչյուրը կարելի է անվանել «հոլովման տեսակներ»:

Չոլովվելու տեսանկյունից ժամանակակից հայերենի բառերը բաժանվում են

որոշակի խմբավորման, որն արտահայտել ենք ստորև բերվող աղյուսակում:

**Աղյուսակ 1**

Հոլովվող			Չհոլովվող	
Ինքնին հոլովվող		Փոխանվանաբար հոլովվող («ի» հոլովմամբ, կցական տիպով)	Ինքնանվանողաբար հոլովվող («ի» հոլովմամբ, կցական տիպով)	մակբայ
Անվանական (կցական և թեքական տիպերով)	Դերանվանական (թեքական տիպով)		ածական	կապ
գոյական	Լրիվ	Մասնակի	թվական	շաղկապ
(«ի», «ու», «ամ», «վա», «ոջ», «ց», «ա», «ո» և այլաձև հոլովումներով)			դերանուններից <i>(այսքան, յուրաքանչյուր, բոլոր...)</i>	վերաբերական
դերանուններից <i>(«ի», «վա», «ու», «ց» հոլովումներով (ոչ ոք, երբ, մեկմեկու, ոմանք...))</i>	ես դու ով	նա ինքը մենք դուք սա դա իրար	հարակատար դերբայ	ծայնարկություն
անորոշ դերբայ <i>(«ու» հոլովմամբ)</i>			ենթակայական դերբայ	դերանուններից <i>(ոմն, որևիցե, այս, այդ, ինչու...)</i>
բացառիկ մակբայներ և կապեր <i>(«ի» և «վա» հոլովումներով (այսօր, երեկ, վաղը, միջից, ներքևում, դիմացը, ետևից...), (տակ, մոտ, վրա...))</i>				

Նպատակահարմար չգտնելով վերաշարադրել հոլովումներից յուրաքանչյուրին վերաբերող դասագրքային և գիտական [2, 70-89] [3, 81-106] տեսական նյութը՝ այստեղ փորձել ենք համակարգել հոլովման տիպերի և տեսակների ընդհանուր պատկերը՝ ներկայացնելով այն ստորև բերվող աղյուսակով:

**Աղյուսակ 2**

<b>Ժամանակակից հայերենի հոլովումները</b>			
<b>Չոլովման տիպերը</b>			
<b>Կցական</b> (արտաքին, վերջավոր) «ի», «ու», «ան», «վա», «ոջ», «ց», «-ո», «-ա», «յան», «վան», «անց», «վի»		<b>Թեքական</b> (ներքին, անվերջավոր) «ա», «ո», «ե», դերանվանական	
<b>Գոյականի հոլովման տեսակները</b>			
ըստ համակարգում ունեցած կարգավիճակի	ըստ ընդհանրականության աստիճանի	ըստ համակարգման հատկանիշի	ըստ զուգածության հնարավորության
<b>համակարգային</b> «ի», «ու», «ան», «վա», «ոջ», «ց», «ա», «ո»	<b>ընդհանրական</b> «ի»	<b>ձևային</b> [2, 80-85] «ի/ու»	<b>մենաձև</b> [2, 80-85] «ց», «անց», «-ա»,
<b>հակահամակարգային</b> (այլաձև) «-ո», «-ա», «յան», «վան», «անց», «-ե-», «վի»	<b>լրացուցիչ բաշխման</b> «ու», «ան», «վա», «ոջ», «ց», «ա», «ո» «յան», «վան», «անց», «-ե-», «-ո», «-ա», «վի»	<b>իմաստային</b> [2, 80-85] «ոջ», «վա»	<b>զուգած</b> [2, 80-85] «անց»/«ի», «ու»/«վա», «ու»/«ի», «ա»/«ի», «վան»/«ի», «վա»/«ի», «յան»/«ի», «-ո»/«ի», «ոջ»/«ի»/«-ո-», «վան»/«ու»/«ի», «ի»/«ու»/«վա», «ու»/«ի»
		<b>ձևաիմաստային</b> [2, 80-85] «ո» (նաև պատմական), «յան» (նաև պատմական), «ց», «ում/ան», «ու/ա» (-ութուն ածանցի դեպքում)	
		<b>պատմական</b> [2, 80-85] «0/ու», «ն/ան», «ու/ա», «-ո», «-ա», «-ե-», «վան», «անց», «վի»	
		<b>խառը</b> [2, 80-85] «ի»	

**Չոլովի բովանդակությունը:** Այստեղ ևս բացակայում է միասնական մոտեցումը: Հաճախ հոլովական իմաստը նույնացվում է շարահյուսական գործառնությունների հետ: Որոշ գիտնականներ [4, 3-175] հոլովական իմաստը տրոհում են բազմաթիվ մասնավոր իմաստների՝ ընկնելով որոշակի ժայռահեղության մեջ: Իմաստային խորը քննությունն, անշուշտ, հնարավորություն է տալիս ճանաչել տվյալ հոլովն իր իմաստային բազմազանությամբ, սակայն մյուս կողմից էլ դա տանում է նրան, որ հստակ չեն տարբերակվում հոլովների հիմնական և երկրորդական իմաստները:

Հայ լեզվաբանության մեջ հոլովների ընդհանուր իմաստների հարցով զբաղվել են Գ. Ջահուկյանը և Է. Աղայանը:

Համեմատելով հայերենի և այլ լեզուների հոլովական համակարգերի հորինվածքը՝ Գ. Ջահուկյանը կարծում է, որ դրանցից յուրաքանչյուրի բնութագրման հարցում անհրաժեշտ են լինում տարբեր քանակով հատկանիշներ (այսպես՝ անգլերենի 2 հոլովների համար՝ 1, արաբերենի 3 հոլովների համար՝ 2, լատիներենի 6 հոլովների համար՝ 4, ժամանակակից հայերենի 5 հոլովների համար՝ 3 հատկանիշ)[5, 33]: Նշված երեք հատկանիշով (բացարձակություն// անսահմանափակու-

թյուն, մեկնակետայնություն// անջատում, ուղղվածություն// հանգում) ժամանակակից հայերենի հոլովներից նա վերագրում է հետևյալ ընդհանուր իմաստները՝

1. **Ուղղական**՝ բացարձակություն// լիաժամանակություն
2. **Տրական**՝ հատկացականություն// հանգակետայնություն
3. **Բացառական**՝ անջատում// մեկնակետայնություն
4. **Գործիական**՝ ուղեկցում// մասնակցություն սկզբից մինչև վերջ (և՛ անջատում, և՛ հանգում)
5. **Ներգոյական**՝ ներկայություն// պարունակություն (ո՛չ անջատում, ո՛չ հանգում)[6, 72]:

Ըստ գիտնականի՝ նշվածներից առավել վերացարկվածը ուղղականի իմաստն է. այն մյուս բոլոր իմաստները կրում է իր մեջ:

Հաշվի առնելով հոլովների ընդհանուր իմաստները և գործառական հատկանիշները՝ Է. Աղայանը շարահյուսական մակարդակում առանձնացնում է հետևյալ հակադիր հարաբերությունները՝

1. առարկայական – հատկանշային
2. մասնակցություն – ոչ մասնակցություն
3. ուղղակի – անուղղակի մասնակցություն
4. ուղղվածություն – ոչ ուղղվածություն
5. հանգման – ելման ուղղվածություն
6. սահմանափակում – ոչ սահմանափակում [7, 231]:

Եթե փորձենք վերոհիշյալ ընդհանուր իմաստները ներկայացնել ըստ հոլովների, ապա կստանանք մոտավորապես հետևյալ պատկերը՝

1. **Ուղղական** – անվանողական//բացարձակ
2. **Տրական** – հանգակետային
3. **Բացառական** – անջատման, մեկնակետային
4. **Գործիական** – գործողության միջոցի, «իրացման» (Է. Աղայանի եզրույթը)
5. **Ներգոյական** – ընդգրկման, ներառման:

Պետք է ընդունել, սակայն, որ հինգ հոլովի համակարգում ամենից անհաջողը շարունակում է մնալ «Տրական» անունը, որն էլ հնարավորություն չի տալիս առաջին թեք հոլովին վերագրել որևէ ընդհանրական իմաստ:

Հոլովի ընդհանուր իմաստը կազմում է տվյալ հոլովի իմաստային դաշտի միջուկը, իմաստ, որն այս կամ այն չափով գիտակցվում է նաև միջուկամերձ և ծայրամասային իմաստների դեպքում:

Դառնալով հոլովական իմաստ-շարահյուսական գործառույթ հարաբերակցության խնդրին՝ հակված ենք կարծելու, թե հոլովի իմաստը նույնանում է նրա ընդհանրական իմաստին, մինչդեռ նրա մասնավոր իմաստները համընկնում են շարահյուսական հարաբերությունների իմաստներին և նույնանում՝ շարահյուսա-

կան գործառույթների անվանումների հետ:

Ստորև բերվող աղյուսակով կփորձենք ամբողջացնել ժամանակակից հայերենի՝ հինգ քերականույթ ընդգրկող հոլովական համակարգի ձևաիմաստային նկարագիրը:

**Աղյուսակ 3**

	Իմաստային դաշտը				Ձևավորումը		
	Ընդհանուր իմաստը	Միջուկային իմաստագործառույթները	Միջուկամերձ իմաստագործառույթները	Ծայրամասային իմաստագործառույթները	Գրգռված միջուկ	Լրացուցիչ բաշխման միջոցներ	Հոդատարությունը (որոշիչ հոդեր)
<b>ՈԲ.</b>	բացարձակություն // լիածավալություն, անվանողականություն	1. ենթակա 2. ուղիղ խ. 3. որոշիչ 4. ստորոգելի 5. տեղի պ.	1. ժամանակի պ. 2. կոչական 3. չափի պ.	1. նպատակի պ. 2. փոխակերպված ենթակա	<b>0</b>	-	+
<b>Տ.</b>	հատկացականություն// հանգակետայնություն	1. հատկացուցիչ 2. հանգման և մատուցման անուղղ. խ.-ներ 3. ուղիղ խ. 4. որոշիչ	1. ժամանակի պ. 2. տեղի պ. 3. նպատակի պ.	1. ձևի պ. 2. վիճակի պ. 3. փոխակերպված ենթակա 4. վերածման անուղղ. խ. 5. ստորոգելի	<b>-ի</b>	-ու, -ան, -վա, -ոջ, -ց, -յան, -վան, -անց, -ա-, -ո-, -ն, -ա, -ե-, -վի	+ (սահմանափակում ներով)
<b>Բ.</b>	անջատում// մեկնակետայնություն	1. անջատման անուղղ. խ. 2. տեղի պ. 3. ժամանակի պ. 4. վերաբերության անուղղ. խ..	1. համեմ. անուղղ. խ. 2. մասնական ուղիղ խ. 3. նյութի և բաղկ. անուղղ. խ. 4. ներգործող անուղղ. խ. 5. սահմանափակման անուղղ. խ. 6. հիմունքի պ. 7. պատճառի պ.	1. որոշիչ 2. ստորոգելի	<b>-ից</b>	<b>-ուց</b> («ու» հոլովման դեպքում)	-
<b>Գ.</b>	միջոց	1. միջոցի անուղղակի խ. 2. ձևի պ. 3. միասնության անուղղ. խ.	1. նյութի և բաղկ. անուղղ. խ. 2. սահմանափակման անուղղ. խ. 3. ներգործող անուղղ. խ. 4. տեղի պ. 5. ժամանակի պ. 6. չափի պ. 7. պատճառի պ. 8. հիմունքի պ.	1. որոշիչ 2. վիճակի պ. 3. ստորոգելի 4. փոխարինության անուղղ. խ.	<b>-ով</b>	<b>-բ</b> (-ություն, -ում ածանցների և «արյուն» բառի դեպքում)	-

	Իմաստային դաշտը				Ձևավորումը		
	Ընդհանուր իմաստը	Միջուկային իմաստ-գործառույթները	Միջուկամերձ իմաստ-գործառույթները	Ծայրամասային իմաստ-գործառույթները	Հիմնական գրությունները	Լրացուցիչ բաշխումը	Մեկնումներ (տարբերակներ)
Ն.	ճերմակ	տեղի պ.	1. ժամանակի պարագա 2. սահմանափակման անուղղ. խ.	1. վիճակի պ. 2. ստորոգելի 3. հիմունքի պ.	-ում	-	-

Ամփոփելով բուն շարադրանքը՝ նշենք, որ՝

- Հոլովը ժամանակակից հայերենին հատուկ քերականական կարգ է, որ բնութագրվում է ձևաիմաստային մի շարք առանձնահատկություններով (Տե՛ս աղյուսակ 3):
- Հոլովվելու տեսանկյունից ժամանակակից հայերենի բառերը ենթարկվում են որոշակի խմբավորման (Տե՛ս աղյուսակ 1):
- Անհրաժեշտ է տարբերակված ընդունել և շնջանառել «հոլովման տիպ» և «հոլովման տեսակ» եզրույթները (Տե՛ս աղյուսակ 2):
- Հոլովի բովանդակային պլանին առնչվող «հոլովական իմաստ» և «չարահյուսական գործառույթ» եզրույթների հարաբերակցությունը ճիշտ կլինի նույնացնել «հոլովի ընդհանրական իմաստ» և «հոլովի մասնավոր իմաստ» ըմբռնումների հետ (Տե՛ս աղյուսակ 3):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Չատոր 3, Երևան, 1957:
2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան, 2004:
3. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Յ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Չատոր 2, Երևան, 1974:
4. Վ.Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957:
5. Գ. Джаукян, Общее и армянское языкознание, Ереван, 1978:
6. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը (Չարաքերակցային քննության փորձ), Դասախոսություն, Երևան, 1967, ԳԱԱ հիմնարար գրադարան:
7. Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:

## ХАРАКТЕРИСТИКА ФОРМЫ И ЗНАЧЕНИЯ ПАДЕЖЕЙ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ЭГИНЕ МЕЛКОНЯН

### РЕЗЮМЕ

В данной статье мы попытались дать общую характеристику падежной системы современного армянского языка. Затронуты некоторые терминологические и классификационные вопросы касающиеся формы и смысла падежей. Основные выводы выражены в авторских таблицах.

## THE MORPHOLOGICAL-SEMANTIC DESCRIPTION OF CASE FORMS IN MODERN ARMENIAN LANGUAGE

HEGHINE MELKONYAN

### SUMMARY

In this article we tried to give the general description of case forms in modern Armenian language. Terminological questions and questions of classification are also touched. The main results are seen in the authorial tables.